

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԽՈՐՀՈՒԹԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԵՐԸ

ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏ

5 օգոստոս, երկուշաբթի, ժամը 11

Նախադահ՝ Աւ. Սահակեան

Օրակարգի նիւթն է՝ կառավարական յայտագրի քննութիւնը:

Խօսք է առնում Հ. Յ. Դաշնակցութեան Փրակցիայի նախագահ Սմբ. Խաչատրեանը, որ կարճ ճառով ցոյց է տալիս յայտագրի մի քանի երկրորդական թերութիւնները և գտնում է, որ յայտագրի ընդհանուր առմամբ, բաւարարում է իր Փրակցիային:

Ա. Խոնդկարեան, սոց. – յեղ. – իւրաքանչիւր յայտագրի նպատակն է ծանօթացնել խորհրդարանին և վերջինիս միջոցով ժողովրդին նոր կազմւած կառավարութեան բնոյթին, որպէսզի խորհրդարանը կարողանայ ճշտել իր վերաբերումը դէպի կառավարութիւնը: Այդ տեսակէտից, յայտագրի ըստբագրւած է այնպիսի ընդհանուր արտայայտութիւններով, որ կարելի չէ որոշ գաղափար կազմել կառավարութեան մասին: Սա մի ընդհանուր յայտագրի է, որ կարող է յարմարել ամէն մի կառավարութեան, այնքա՞ն քիչ են նրա մէջ թանձրացեալ կէտերն ու մանրամասնութիւնները: Անդրանիկ կառավարութեան յայտագրի պէտք է ունենար սահմանադրական բնոյթ: Երկրում ամէն ինչ քայլայւած է, հարկաւոր է ըստեղծել պետական նոր մեքենայ, և կառավարութիւնը պէտք է ասէր, թէ ինքը ինչպէս պիտի գլուխ բերէ այդ գործը: Մի երկրի քաղաքական կեանքի բովանդակութիւնը որոշւում է խորհրդարանի գործունէութեամբ, բայց կառավարութիւնից երկրը սպասում է կառավարական գործի կարգաւորում: Յայտագրի մէջ չկայ և ոչ մի խօսք այդ մասին:

Անցնելով արտաքին քաղաքականութեան՝ պատգ. Խոնդկարեանը զարմանք է յայտնում, որ ոչ մի խօսք չի ասւած Ռուսաստանի հետ ունենալիք յարաբերութեան մասին: Արդեօք այդ բացատրում

է նրանով, որ կառավարութիւնը Ռուսաստանի հարցը համարում է լուծւած խնդիր, թէ՞ ուրիշ նկատումներ կան: Յամենայն դէպս, սոց. - յեղափոխական Փրակցիան աշխատելու է վերականգնել միացեալ յեղափոխական ճակատը Ռուսաստանի հետ եւ կովկասեան գէմովլրատիան դաշնակցական կապերով կապել Ռուսաստանի ռամկալար հանրապետութեան հետ:

Պատգամաւորին անհասկանալի են թւում այն շարժառիթները, որոնք սափել են կառավարութեան ներկայանալ խորհրդարանին այնպիսի յայտագրով, որի մէջ կառավարութեան իսկական դիտաւորութիւնները քօղարկւած են ընդհանուր խօսքերով: Բայց հէնց այդ հանդամանքը հնարաւորութիւն չէ տալիս որոշ զաղափար կազմել կառավարութեան եւ նրա քաղաքականութեան մասին: Այդ պատճառով սոց. - յեղ. Փրակցիան դժւարանալով միայն յայտագրի հիման վրա ճշտել իր վերաբերումը դէպի Քաջազնունիի դահլիճը՝ որոշել է մնալ ձեռնպահ վստահութեան կամ անվստահութեան բանաձեւի քէչարկութեան ժամանակ:

Հայ Ժողովրդական Կուսակցութեան ներկայացուցիչ Արշալոյս Մխիթարեանը յանուն իր Փրակցիայի կարգում է հետեւեալը. -

Հայ Ժողովրդական Կուսակցութեան Փրակցիան, լսելով Հայաստանի Խորհրդում կառավարութեան օդոստ. Յ-ին յայտարարած դէկլարացիան՝ զոհունակութիւն յայտնում, որ կառավարութիւնը որոշել է հետեւել ոչալ քաղաքականութեան եւ խուսափել է ծըրագրային ծայրայիդ յայտարարութիւններից: Այսու հանդերձ նա կառավարութեան դէկլարացիայի վերաբերմամբ հետեւեալ դիտողութիւններն է անում. -

1) Ներքին գործերի սահմաններում. - Զամփաղանց անորոշ մի Փօրմուլա է առելը «Հաստատել երկրում տարրական իրաւակարգ եւ կեանքի ու զոյքի ապահովութիւն» , առանց ցոյց տալու այն հիմունքներն ու միջոցները, որոնց վրա պիտի յինուի եւ իրաւագործելի այդ իրաւակարգը: Այսիսի անորոշ եւ անպատասխանատու յայտարարութիւն կարող է անել ամէն տեսակ կառավարութիւն՝ նրա մէջ զնելով իր ցանկացած բովանդակութիւնը: Փրակցիան կարծում է, որ այս կէտում յատկապէս պէտք է լիւտած լինէին այն հիմնարկութիւնները, որոնք պիտի ստեղծեն իրազործելու համար իրաւակարգը և կեանքի ու զոյքի ապահովութիւնը: Պէտք է լիշտակած լինէր թէ մտադիր է արդեօք կառավարութիւնը այժմէն եւ եթ մտցնել գէմսուացին ինքնավարութիւն, կամ ի՞նչ կերպով նա մտադիր է կազմակերպել տեղական իշխանութիւնները: Դարձեալ անյայտ է մնում, ինչպիսի վերաբերմունք ունի կառավարութիւնը դէպի մամուլը,

խօսքի, ժողովների աղատութիւնը, անձի և բնակարանների անձեռնմխելիութիւնը և այլ քաղաքացիական աղատութիւնները, և ի՞նչ կերպով մտադիր է սրանք իրագործել երկրի ներկայ քառային վիճակում :

2) Պարենաւորման գործի վերաբերեալ Փօրմուլան, այն է՝ «եռանդուն միջոցների գիմել կարելոյն չափ մեղմացնելու պարենաւորման տագնապը»՝ ցոյց է տալիս, որ կառավարութիւնն այս հարցում իսկապէս ոչ մի որոշ պարտականութիւն յանձն չէ առնում Հայաստ. Խորհրդի առաջ, որովհետեւ, «ըստ կարելոյն» խօսքը բոլորովին առաջդական և անպատճախանատու դարձւածք է: Ֆրակցիան կարծում է, որ կառավարութիւնը պարտական էր ցոյց տալ գոնէ մի քանի ոչալ միջոցներ փարատելու համար պարենաւորման ահուելի աղէտը, որ սպառնում է ժողովրդի Փիզիքական գոյութեան, պէտք է ցոյց տար, թէ շարունակելո՞ւ է արդեօք հացի պետական մենավաճառութիւնը, մտագի՞ր է արդեօք և ի՞նչ միջոցներով ապահովել կենսամթերքների անկորուստ ամբարումը, օտար երկրներից հացի ներմուծումը և մթերքների հաւասարաչափ ու կանոնաւոր բաշխումը:

3) Նոյնպէս անորոշ և անբաւարար է կառավարութեան յայտաբարութիւնը գաղքականների վիճակի վերաբերմամբ. յայտնի չէ նրանից, թէ մտագի՞ր է արդեօք, կառավարութիւնը նոր գիւղատեղեր ստեղծել նրանց համար, կազմակերպել հասարակական աշխատանքներ՝ նրանց գուրս բերելու համար այժմեան անցանկալի մուրացկանութեան վիճակից, ապահովել նրանց համար առողջապահական մինիմալ պայմաններ սոսկալի մահացութեան առնելու համար:

4) Ֆինանսական հարցի վերաբերմամբ Փրակցիան գտնում է, որ կառավարութիւնը չունի Փինանսական որոշ քաղաքականութիւն երկրի տնտեսութիւնը բարեկարգելու համար, քանի որ մերի նման աւելաւծ և տնտեսապէս քայլաւած երկրում ոչ մի հարկային սիստեմ, որքան էլ «առողջ լինի», չէ կարող բաւարարութիւն տալ պետութեան Փինանսական կարիքներին: Դալով «առողջ» հարկային սիստեմին՝ Փրակցիան նկատում է, որ գա միանգամայն անորոշ եւ առաջդակական խօսք է եւ չի տալիս որեւէ հասկացողութիւն թէ հարկերի բազմատեսակ եւ բարդ սիստեմներից կառավարութիւնը ո՞րն է համարում առողջ:

5) Արդարադատութեան սահմաններում Փրակցիան նոյնպէս անբաւարար է գտնում արդարադատութեան և դատավարութեան վերաբերեալ մի քանի խօսքերը: Դէկլարացիայի մէջ չէ յիշւած, թէ կառավարութիւնը ի՞նչ միջոցներ պիտի ձեռնարկէ եւ ի՞նչ օրինա-

զըծեր ունի ի նկատի մօտակայ ապագայում դատավարութեան եւ արդարադատութեան դործը հաստատում հիմքերի վրա դնելու համար : Նա նոյնիսկ դանց է անում յիշել, թէ մինչեւ նոր օրէնքների սահմանելը ի՞նչ օրէնքներով պէտք է կառավարւի երկիրը : Նոյնպէս մատնանշւած չէ ուստական, պէտական եւ տեղական լեզուների կիրառութեան եղանակը դատավարութեան մէջ :

6) Գալով կառավարութեան յայտարարութեան արտաքին գործերի վերաբերմամբ, այսինքն՝ «ամբացնել օմանեան կառավարութեան հետ կնքւած հաշտութիւնը եւ բարի դրացիական յարաբերութիւններ հաստատել նրա հետ : Խստիւ կատարել այն բոլոր պարտականութիւնները, որ մենք յանձն ենք առել օմանեան կառավարութեան հանդէպ, եւ հետեւել, որ օմանեան կառավարութիւնը իր կողմից անի նոյնը մեր վերաբերմամբ, մասնաւորապէս լուծել օմանեան զօրքերի մեր երկրից գուրս բերելու հարցը եւ գաղթականների վերադարձը»՝ Փրակցիան ուղղակի ապշում է, թէ ինչպէս կառավարութիւնը անտես է անում բովանդակ հայ ժողովրդի տենչն ու կենսական շահերը այնպիսի մի գործում, որից կախւած է հայ պետութեան լինելու-չլինելու հարցը : Մինչդեռ կառավարութեան պատգամաւորները կ. Պօլում աշխատում են օմանեան պէտութեան եւ նրա դաշնակից պետութիւնների համաձայնութեամբ վերաբննել Բաթումի հաշտութեան դաշնագիրը՝ նպատակ ունենալով ընդարձակել մեր պէտութեան սահմանները եւ հնարաւորութիւն տալ հայ ժողովուրդին ապրելու պէտական կեանքով . մինչդեռ Հայստանի Խորհրդի բացման հանդիսաւոր օրը պ. նախագահը, թարգման հանդիսանութիւնը ժողովրդի միահամուռ տենչանքին, յոյս յայտնեց, թէ՝ «սահմանները քարացած չեն, որ նրանք կընդարձակւին կեանքի երկաթէ օրէնքի ուժով, մեր արդար եւ անվիճելի իրաւունքների պաշտպանութեամբ դրաւած հողամասերի վերաբերմամբ», կառավարութիւնն իր յայտարարութեամբ լիովին հաշտում է Բաթումի դաշնագրի հետ եւ խոստանում է նրան ամբադեկ՝ սրանով կանխօրէն զլիստելով իր պատգամաւորների գործը եւ ուղղակի ի չիք դարձնելով նրան :

7) Բացի սրանից, Փրակցիան հարկադրւած է մատնանշել, որ կառավարութիւնը միանգամայն լուս է ժողովրդական լուսաւորութեան մասին եւ նոյնիսկ չէ յիշում որեւէ օրգան, ժողովրդական լուսաւորութեան կարեւոր գործը վարելու համար, կարծես այս հարցը գոյութիւն չունի նրա համար . նա միանգամայն անտես է անում ժողովրդական առողջապահութիւնը, որ մանաւանդ վտանգւած է պարբենաւորման տաղնապի, գաղթականների անտանելի վիճակի

եւ ծագած համաճարակների պատճառով։ Հսութեան է մատնում նաեւ հողային հարցը, որ չնորհիւ դործադրուղ հին եւ նոր, միմեանց հակասող օրէնքների ու կարդադրութիւնների, դանում է քառային դրութեան մէջ եւ առիթ է տալիս անվերջ դատաստանական վէճերի եւ ընդհարումների։ Կառավարութիւնը լուռմ է նաեւ, թէ նոր ստեղծած պետութիւնը ի՞նչ յարաբերութիւն է պահպանելու հարեւան նոր պետութիւնների եւ հեռաւոր մէծ պետութիւնների հետ։ ի՞նչ օրիէնտացիայի է հետեւելու իր արտաքին քաղաքականութեան մէջ, մի հանդամանք, որ վճռական նշանակութիւն ունի մէր պետական կեանքի ուղղութեան դործում։

Այս դիտողութիւններն անելով եւ գտնելով, որ կառավարութեան դէկլարացիան թերի է եւ շատ մասերում անբաւարար՝ Հայ ժող. Կուսակցութեան Փրակցիան յայտարարում, որ ինքը կաջակցի կառավարութեան այն չափով միայն, որ չափով նա կիրազործէ իր դէկլարացիայի այն խոստումները, որոնց դէմ Փրակցիան առարկութիւն չունի, եւ որչափ նա ի նկատի կառնէ եւ կաշխատի իրադորձել Փրակցիայի դիտողութիւններ։

Սոց. – դէմ. Փրակցիայի կողմից արտայալուում են երկու պատգամաւորներ։ Մէնչեւիկ հատւածի կողմից Հ. Ազատեանը նոյն պէս գոհ չէ յայտագրի ընդհանուր բնոյթից եւ անորոշութիւնից։ Յայտագրում ոչ մի խօսք չի ասւած աշխատանքի օրէնսդրութեան եւ բանտորական հարցի մասին։ անտեսւած են առողջապահական և դպրոցական ինդիբներ։ Ինչ վերաբերում է Հայաստանի ապագային, Ազատեանը չի հաւատում անդրկովկասեան անկախ պետութիւնների գոյութեանը։ Նա յոյս է յայտնում, որ հանրապետութիւնները կը հասկանան այդ եւ չուտով նորից կը վերականգնեն Անդրկովկասի միասնական եւ բոլչեւիկներից անկախ հանրապետութիւնը։

Սոց. – դէմ. Փրակցիայի միւս հոկտորը՝ բոլչեւիկ Ա. Մելիքեանը, ընդհանուր արտայայտութիւններով, ներկայացնում է իր աշխարհահայեցքը եւ խօսում է Համաշխարհային յեղափոխութեան, բանտորութեան անելիքների եւ նման խնդիրների մասին։ Դէմ արտայայտելով Հայաստանի անկախութեան՝ Մելիքեանը անհրաժեշտ է համարում վերականգնել կապը Ռուսաստանի հետ, անկախ այն բանից, թէ ի՞նչ կուսակցութիւն է կանդնած Ռուսաստանում իշխանութեան գլուխը։

Մահմեդական ֆրակցիայի ներկայացուցիչը հակաճառում է յայտագիրը քննադասողներին, գտնում է յայտագիրը գոհացուցիչ

Եւ իր Փրակցիայի կողմից խոստանում է անլեռապահ աջակցութիւն կառավարութեան :

Ուուս պատգամաւոր Ա. Ի. Զորինը շօշափում է Հայաստանի յարաբերութեան խնդիրը Ուուստանի հետ Եւ յայտարարում է, որ քանի որ Հայաստանի Հանրապետութիւնը կատարւած փաստ է, պէտք է հաշւի առնել նրան : Ապա բաղձանք է յայտնում, որ կառավարութիւնը պետական հիմնարկութիւնները վերակաղմելիս չմոռանայ Եւ ուուս պաշտօնեանների ծանր վիճակը :

«Հորիզոն» . «Զակ . Սլովո», 17 օգ .

ՉՈՐԾՈՐԴ ՆԻՍՏ

6 օգոստոս, երեքշաբթի, երեկ. ժամը 7

Նախադահ Աւ. Սահակեան

Նիստը բանալով՝ նախադահը առաջարկում է անցնել աւագ քարտուղարի երկու օդնականների ընտրութեան : Աւաղների խորհրդի որոշման համաձայն աւագ քարտուղարի օդնականներ պէտք է ընտրուէին մէկը Դաշնակցութեան կողմից, միւսը՝ մահմեղական Փըրակցիայից : Դաշնակցական Փրակցիայի կողմից առաջարկւած Եփրեմ Սարգսեանը ընտրուում է : Մահմեղական Փրակցիայի կողմից պ. Աղարէկովը խնդրում է իրենց թիկնածուի ընտրութիւնը յետաձգել :

Ամբիոն է բարձրանում վարչապետ Քաջազնունին .— Պարտք եմ համարում նախորդ նկատողութիւնների առթիւ տալ բացատրութիւններ, որոնք վերաբերում էին իմ արած յայտարարութեանը : Այդ նկատողութիւնները ես բաժանում եմ երկու մասի . ա) նկատողութիւններ, որոնք վերաբերում էին յայտարարութեան ամբողջութեամբ, եւ բ) նկատողութիւններ՝ արւած յայտարարութեան այս կամ այն կէտի վերաբերմամբ :

Սոց . յեղափոխական Խոնդկարեանը նկատեց, որ յայտարարութիւնը աւելի քան գործնական բնոյթ ունի Եւ չի արտայատում կառավարութեան աշխարհահայեցքը : Ճիշտ է, Ուուստանում կառավարութեան յայտարարութիւնը ընդուրկում է համաշխարհային քաղաքականութիւն, սակայն այդպէս չէ Եւրոպայում . այնտեղ շատ անդամ մի գործնական խնդրի առթիւ կառավարութիւններ են տապալւում : Ներկայ յայտարարութեանը կառավարութիւնը գիտակցորէն գործնական բնոյթ է տւել :

Նոյն պատգամաւորը գծգոհ է, որ կառավարութիւնը իր յայտարարութեան չի տւել սահմանադրական բնոյթ . եթէ իրօք հասել

է սահմանադրելու ժամը, այդ իրաւունքը պատկանում է Առողջողին եւ ոչ կառավարութեանը։ Կառավարութիւնը կոչւած է միայն կեանքի տանելի պայմաններ ստեղծելու մինչեւ սահմանադրի ժողով։

Պատգամաւորներ Ս. Մամիկոնեան*) եւ Խոնդկարեան առարկում են, որ կառավարութեան յայտարարութիւնը շատ է տարրական ու այրբենական եւ որ նա յարմար կը գայ ամէն մի կառավարութեան. այդ ճիշտ է, եւ ես դա համարում եմ առաւելութիւն, որովհետեւ մեր Երկիրը իրօք այրբենական ծրագրի կարիք ունի, իսկ իմ ասածը հաստատում է այն փաստը, որ այդ այրբենական ծրագրը շուրջն են խմբւել ժողովրդի բոլոր խաւերի ներկայացուցիչները։

Պատգամ. Աղատեանը նկատում է, որ կառավարութեան յայտարարութիւնը յիշեցնում է Ստոլիսլինին, որ ասում էր՝ «Նախ խաղաղութիւն, ապա ռէֆորմներ»։ Այո՛, մենք էլ նոյնն ենք ասում, բայց մեր եւ Ստոլիսլինի տարրերութիւնն այն է, որ մենք այդ ասում ենք անկեղծ, առանց յիշին նպատակների, մինչդեռ Ստոլիսլինը ժողովրդին սպասեցնելով՝ ժամանակ էր վաստակում դժողովութիւնները իրենց բնում խեղդելու համար։ Այդպէս, մեր կառավարութիւնները իրօք ձգտում է ստեղծել ժողովրդի համար տարրական իրաւակարգ, որովհետեւ նախ քան քաղաքացիական ազատութիւնները ապահովելը պէտք է ապահովել ազատ խօսքը եւ այն։

Պատգամաւոր Ս. Մամիկոնեանը զնում է մի արմատական հարց. նա՝ դիմելով կառավարութեան եւ ժողովրդին՝ հարցնում է. «Արդեօք հէնց Հայաստանի Հանրապետութեան գոյութիւնը ինքնին մի կատաստրօֆա չէ՞»։ Գուցէ այդպէս է, սակայն տարօրինակ է, որ այդ հարցը լաւում է այստեղ։ Եթէ գոյութիւն ունի հանրապետութիւնը եւ նրա կառավարութիւնը, ուրեմն, այդ հարցն իր նշանակութիւնը կորցնում է եւ չի կարող բնդունել։ Այդ հարցը չպիտի դրւէր այստեղ նստածների կողմից։

Այժմ ես անցնում եմ նկատողութիւնների երկրորդ մասին, որոնք վերաբերում են, ինքն ըստ ինքեան հասկանալի լինելու պատճառներով, մեր յայտարարութեան մէջ տեղ չդտած առանձին – առանձին կէտերին։

*) Ս. Մամիկոնեանի նառ, դժբախտաբար, չունենք։ Մամիկոնեանը խիստ քննադատութեան ենթարկեց կառավարութեան յայտագիրը, արտայայտեց դէմ անկախութեան եւ շեշտեց աներածեշտութիւնը վերականգնելու միութիւնը Ռուսաստանի հետ։

Պատգամ . Խոնդկարեանը ասում է , որ մեր Հանրապետութիւնը Հայաստանի է եւ ոչ Հայերի . ապա՝ պատգամ . Ա . Մելիքեան եւ Ա . Աղաբարէկիով յայտնում են , որ Հայաստանի ժողովուրդների միջեւ պիտի գոյութիւն ունենայ բարեացակամ յարաբերութիւն : Այդ խնդրի մասին ես առիթ եմ ուեցել աւելի հանդիսաւոր պայմաններում արտայայտելու ճիշտ նոյն բառերով , եւ եթէ պատգամաւորները կարիք են զգում , կառավարութիւնը մի անգամ էլ կը կրկնէ նոյնը : Ինչ վերաբերում է դաւանութեան եւ այլ քաղաքացիական ազատութիւններին , դրանք այնքան պարզ եւ հասկանալի են , որ ուրիշ կերպ չէր էլ կարող լինել :

Կառավարութիւնը յայտարարութեան մէջ չէ յիշել ժողովրդական լուսաւորութեան եւ առողջապահական գործի մասին : Մէնք լոյսին եւ առողջապահութեան թշնամի չենք , այնուամենայնիւ չենք մտցրել յայտարարութեան մէջ , որովհետեւ նախ՝ ինքնըստինքեան հասկանալի են , երկրորդ՝ որ մեր պայմաններում այդ հարցերը չեն կարող դրաւել առաջնակարդ ուշադրութիւն : Ի՞նչ բժշկութիւն եւ ի՞նչ լոյս էք ուզում տալ այն բազմահազար գաղթականութեան , որը սակայն , անտուն , սեփական ապականութեան մէջ փոսած՝ թափառում է այս ու այն կողմ : Կառավարութիւնը , ի հարկէ , այդ հարցերի մասին հոգացողութիւն կունենայ , սակայն դա խոչոր եւ այժմէական պետական գործ չէ համարւում :

Պատգ . Ա . Միխիթարեանը հարցնում է . «Ի՞նչ օրէնքներով պիտի կառավարւի Հայաստանի Հանրապետութիւնը մինչեւ նոր օրէնք մշակելը » : Սրան կը պատասխանեմ , որ մինչեւ այժմ մենք զեկավարւել ենք ուստական , Անդրկովկասեան կառավարութեան եւ Սէյմի օրէնքներով : Այդպէս էլ պիտի շարունակւի , մինչեւ նոր օրէնքներ մշակելը :

Պատգմ . Աղատեան , Զորին եւ Միխիթարեան ասում են , որ կառավարութիւնն ամէն ինչ ուզում է անել ինքն իր ձեռքով եւ ոչ տեղային ինքնավարութիւնների հետ : Դա կատարեալ թիւրիմացութիւն է . կառավարութեան մտքով անգամ չէ անցել մեղնում բիւրոկրատական կարգ հաստատել . բնդհակառակը , ժողովրդական հաստատութիւնների , տեղային զէմստույական եւ մունիցիպալ հիմնարկութիւնների միջոցով է , որ պիտի գործէ կառավարութիւնը . սակայն , նա ուզում է ազատ պահել իրեն կաշկանդումներից եւ ըստ ուշադանների գործել տեղային ինքնավարութիւնների միջոցով կամ ուղարկել կոմիսարներ :

Պատգ . Աղատեանը նկատում է , որ արդարադատութեան վերաբերմամբ մի սխալ է կատարեալ , այն է՝ արդարադատութիւնը ու-

գում են համաձայնեցնել ժողովրդի քաղաքացիական իրաւահասկացողութեան։ Դա թէւրիմացութեան հետեւանք է միայն։ ոռուերէն պրախօօրորոտ բառը սիսալմամբ թարգմանւել է «իրաւահասկացողութիւն» տերմինով։

Պատգ. Միսիթարեան եւ Աղատեան ասում են, որ հարկերի «առողջ սիստեմ» հասկացողութիւնը առաձգական է։ Ես բաց կանեմ փակաղծերը եւ կասեմ, որ հարկերի առողջ սիստեմ ասելով մենք հասկանում ենք եկամտային պրոգրեսիւ հարկ, սակայն տեխնիկական անյարմարութիւնների պատճառով, գուցէ, կառավարութիւնը չկարողանայ անմիջապէս կիրառել յիշեալ սիստեմը, ուստի եւ յայտարարութեան մէջ յատկապէս չէ յիշել։

Պատգ. Խոնդկարեանը նկատում է, որ Հայաստանի, Վրաստանի եւ Ամրպատականի սահմանները որոշելիս ի նկատի է առնելու միայն ազգագրական սկզբունքը, անտեսելով տնտեսական պայմանները։ Ցիշեցնում եմ սահմանորոշող ծրագրի սկզբունքներին ծանօթմարդոց, այնուղի կիրառած են թէ ազգագրական, թէ աշխարհագրական – տեղագրական եւ թէ տնտեսական պայմանները։

Սահմանների վերաբերմամբ պատգ. Մամիկոնեանը հարց է տալիս՝ որո՞նք են Հայաստանի սահմանները։ Նախ՝ այդ հարցը պիտի լուծեի երկուստեղ համաձայնութեամբ, երկրորդ՝ Մամիկոնեանը լու դիտէ այդ ուղղութեամբ տարւող աշխատանքները եւ նրանց ձգձգման պատճառները, որոնք մեղնից կախւած չեն։

Պատգ. Միսիթարեան պարենաւորման հարցի մասին խօսելիս մատնանշում է, որ յայտարարութեան մէջ ասւած է՝ «կառավարութիւնը ըստ կարելոյն պիտի մեղմացնէ պարենաւորման տափնապը»։ Եւ այդտեղից եզրակացնում է՝ ուրեմն՝ կառավարութիւնը այդ սասպարէզում պարտականութիւն եւ պատասխանաւութիւն չի վերցընում իրեն վրա։ Կառավարութիւնը պարենաւորման հարցը համարում է ամենագլխաւոր եւ ջանք չի խնայելու այն կանոնաւորելու, սակայն լիովին պարտականութիւն չի վերցնում կերակրելու բաղմահաղար դաղթականութիւնն ու ժողովուրդը եւ այդ պատճառով արտայատում է զուսպ ձեւով։

Այս կարգի հարցերից է եւ յեղուների հարցը։ Ես պէտք է ասեմ, որ այդ հարցի վճռելը կախւած է Խորհրդից, եւ կառավարութիւնը մտապիր է Խորհուրդ մտցնել համապատասխան օրինադիք, մինչ այդ՝ կառավարութիւնը պետական լեզուն ընդունելով հայերէնը՝ դրա հետ միասին թողի է տալիս տեղական միւս լեզուների դորձածութիւնը։

Այժմ անցնում եմ այն հարցերին, որոնց դէմ պիտի առարկեմ։

Պատգ. Խոնդկարեան, Ա. Մելիքեան եւ Մամիկոնեան հարցնում են՝ որո՞նք են Հայաստանի սահմանները։ Ես դրան պիտի պատասխանեմ։ Հայաստանի հիւսիսային սահմանները որոշւած չեն, իսկ հարաւայինը որոշւած է, ընդհանրապէս պարտք եմ համարում յայտարարելու, որ քանի դեռ նոր ակտով սահմանները փոխւած չեն, այժմ գոյութիւն ունեցողներից գուրս ուրիշն ընդունելի լինել չի կարող։

Ապա մեզ հարցնում են պատղամաւրներ Զորին, Խոնդկարեան, Ա. Մելիքեան, թէ ինչո՞ւ արտաքին քաղաքականութեան մասին խօսելիս, բացի Թիւրքիայից, Ատրպատականից եւ Վրաստանից, միւս պետութիւնների հետ ունենալիք յարաբերութիւնների մասին խօսք չկայ։ Դրա պատասխանը շատ կարճ է։ նախ՝ իրաւական տեսակէտից մեր անկախութիւնը ճանաչել են առաջմ վերոյիշեալ երեք պետութիւնները եւ երկրորդ՝ միւս պետութիւնների հետ յարաբերութիւն ստեղծելու աելնիքական յարմարութիւն չկայ։ Աւելի լայն քաղաքական յարաբերութիւններ սկսելը ապագայի գործ է։

Շատերին զարմացնում է կառավարութեան այն դարձւածքը, թէ նա խստիւ պիտի կատարէ Թիւրքիայի հետ կապած դաշնագրի պայմանները եւ հետեւի, որ նոյնն անի եւ Տաճկաստանը։ Այո՛, պիտի ասեմ, որ քանի որ զաշնազրով մենք պարտականութիւններ ենք յանձն առել, որոնք նոր ակտով փոխւած չեն, մենք պիտի կատարենք խստիւ եւ ուրիշից էլ պիտի պահանջնենք նոյնն անել։

Պատգ. Խոնդկարեանը գժգոհ է, որ յայտարարութեան մէջ ոչինչ չէ առած Անդրկովկասեան ֆէզէրացիայի մասին, որովհետեւ Հայաստանը, Վրաստանը եւ Ատրպատականը առանձին – առանձին գոյութիւն ունենալ չեն կարող։ Յայտնի պիտի լինի ձեզ, որ հայերըս մինչեւ վերջն էլ կողմնակից էինք Անդրկովկասեան ֆէզէրացիային, եւ մենք չինք, որ բաժնւեցինք, այլ մեզ բաժնւեցին իւրենցից։ Իսկ եթէ հարաւարութիւն ստեղծելի վերոյիշեալ երեք հանրապետութիւնների գահնակցութեան, որին մենք հաւատում ենք, այդ մեր ցանկութիւնն է եւ մեր ապագան։ Ներկայումս առ հարցը զնելը եւ գործնականորէն լուծելը հնարաւարութեան սահմաններից մէջ է Յայտարարութեան մէջ եղած բարեկամական յարաբերութուրս է։ Յայտարարութեան մէջ եղած բարեկամական յարաբերութիւնների ցանկութիւնը Ատրպատականի եւ Վրաստանի հետ ապացուցում են, որ մենք խուսափում ենք կոնֆլիկտներից եւ հարթում ենք այդ հարցի բարեյաջող լուծումը։

Պատգ. Ազատեանը զինորական վարչութեան ծրագրի գէմ առարկելով՝ ասում է՝ որ մենք մշտական զօրք պահել չենք կարող եւ պէտք է ընդունենք միլիցիայի սկզբունքը, իսկ պատգ. Մամիկոն-

եանը պահանջում է զօրքի թիւն աւելացնել։ Կառավարութիւնը այդ երկու առաջարկութեան էլ համաձայնել չի կարող։ Նա այսօր չի կարող արձակել մշտական զօրքը ու գիմել միլիցիական սիստեմի միւս կողմից՝ հնարաւորութիւն չունի նրա թիւը շատացնելու։ Ընդհակառակը, գիմում է բանակի կրծատմանը։

Պատգ. Մամիկոնեանը կարծում է, թէ ներկայում, կառավարութիւնը պիտի հոգայ ու զբաղւի միայն արտաքին քաղաքականութեամբ, սակայն, կառավարութիւնը այդ տեսակէտի վրա կանգնել չի կարող։

Նոյն պատգ. Մամիկոնեանը եւ Ա. Մելիքեանը պահանջում են կառավարութիւնից լինել խիզախ, սակայն, քանի գոյութիւն ունի ներկայ կառավարութիւնը, նա երկիրը չի դնի նոր-նոր արկածների եւ փորձութիւնների առաջ եւ ուրիշների էլ թոյլ չի տայ նոյնը անելու։

Վերջացնելով ասելիքս՝ նորից պարտք եմ համարում ձեր ու շաղըութիւնը հրաւիրելու այն հանգամանքի վրա, որ կառավարութիւնը իր յայտարարութեան մէջ պարզ ասել է, որ սա մի համառու եւ տարրական ծրագիր է եւ, գժրախտարար, մեր պայմանների համար մի մաքսիմում է։ Կառավարութիւնը երջանիկ կը զգայ իրեն, եթէ մասամբ կարողանայ իրականացնել այստեղ ասածները եւ նա կարող է այդ անել, եթէ իր կողմն ունենայ Խորհրդի վստահութիւնն ու աշակցութիւնը։

Յայտարարում է ընդմիջում, որից յետոյ քէարկւում են Փըրակցիաների առաջարկած բանաձեւերը։ 23 ձայնով, ձեռնպահութեամբ 11-ի եւ դէմ՝ ոչ ոքի, անցնում է Հ. Յ. Դաշնակցութեան եւ Հայ ժողովրդական կուսակցութեան հետեւեալ բանաձեւերը։

«Հայաստանի Խորհրդարանը^{*)} լսելով կառավարութեան յայտարարութիւնը եւ մինիստր՝ նախագահի բացատրութիւնները այդ յայտարարութեան առիթով եղած դիտողութիւնների մասին՝ հաւանութիւն է տալիս նրանց եւ անցնում հերթական խնդիրներին»։

Սոյ ։ դէմոկրատական Փրակցիան առաջարկում է հետեւեալ բանաձեւեր։

«Լսելով կառավարութեան յայտարարութիւնը, աչքի առաջ ու

^{*)} Մանօթ.-Սկզբի շրջանում Հայաստանի Խորհուրդը սպառարար կոչւում էր Խորհրդարան. Խորհրդարան բաները միմեամց փոխարէն քէ պատգամաւորերը նաեւում ու բանաձեւերում, քէ մամուլում եւ քէ պաշտօնական քղերի մէջ։ Պաշտօնական անունը, սակայն, Հայաստանի Խորհուրդը էր։

նենալով երկրի ներկայ ծանր պայմանները եւ ցանկութիւն ունենալով, որ կառավարութիւնը իր առաջիկայ գործութեան ժամանակ, յենած դէմոկրատական կազմակերպութիւնների վրա, դեկավարի ֆրակցիաների արած ցուցուններով՝ տանելու երկիրը դէպի դէմոկրատական կարգերը – յոգուտ աշխատաւոր դասակարգերի, Հայաստանի Խորհրդով անցնում է հերթական խնդիրներին»:

Այս բանաձեւը ստանում է 6 կողմ, 21 ձեռնպահ եւ հակառակ՝ ոչ ոք:

Սոց. – յեղափոխականների ֆրակցիայի կողմից պատգ. Ա. Խոնդկարեան յայտարարում է.

«Որովհետեւ կառավարութեան պետի բացատրութիւնից յետոյ ֆրակցիայի դրած հարցերը չպարզեցին եւ չպարզեց կառավարութեան բնոյքը, ուստի եւ ֆրակցիան մնում է իր յայտարարութեան մէջ արած կարծիքին»:

Մահմեդական ֆրակցիայի կողմից Աղաբարեկովը յայտարարում է.

«Լսելով կառավարութեան յայտարարութիւնը եւ նրա դէմ եղած առարկութիւնների բացատրութիւնը, մահմեդական ֆրակցիան յայտնում է կատարեալ վստահութիւն եւ անցնում է հերթական հարցերին, միաժամանակ յոյս ունենալով, որ Հայաստանի Հանրապետութեան մէջ փոքրամասնութեան իրաւունքները լիովին կը պաշտպանեն»:

Այսուհետեւ պատգ. Զուրեանը յայտնում է, որ Երեւանի Հայոց Աղջային Խորհրդի հաշիւները քննող յանձնաժողովը ժամանակին չէր կարողացել իր պարտականութիւնները կատարել. բացի այդ, յանձնաժողովի երկու անդամները հրաժարւել են, ուստի պէտք է որոշել, թէ այդ յանձնաժողովը շարունակելո՞ւ է այդ գործը:

Ֆինանսների մինիստրը առաջարկում է, առհասարակ, պետական բնոյթ ունեցող բոլոր հաշիւների քննութիւնը թողնել ընտրւելիք պետական հսկիչին:

Առաջարկը ընդունուում է 21 ձայնով:

Ապա ժողովը անցնում է չորս յանձնաժողովների ընտրութեան՝ նախապէս որոշելով յանձնաժողովների մէջ մտցնել Հ. Յ. Դաշնակցութեան ֆրակցիայից Յակովի և միւս ֆրակցիաներից՝ մէկական: Ընտրւում են հետեւեալ յանձնաժողովները –

1. Ֆինանսական – Արտաշէս Վանցեան, Հայկ Սարգսեան, բժ. Յովհաննէս Տէր-Միքայէլեան, Արմենակ Աւետիքեան, Արշաւիր Մելքեան:

2. Օրէնտակալան - Սիրական Տիգրանեան, Յովակիմ Բուղաղ-
եան, Ռուբէն Տէր-Մինասեան, Արշամ Խոնդկարեան, Յովհաննէս
Զաքարեան, Գրիգոր Տէր-Խաչատրեան :

3. Հարցապնդումների - Յովակիմ Բուղաղեան, Մմբատ Խաչա-
տրեան, բժ. Արշակ Ղազարեան, բժ. Գրիգոր Տէր-Յակոբեան,
Թաղէոս Աւղալբէկեան, Գարեգին Ենդիբարեան :

4. Կարգադրիչ - բժ. Յ. Տէր-Միքայէլեան, Եփրեմ Սարգսեան,
Յակոբ Տէր-Յակոբեան, Արմենակ Աւետիքեան, Յ. Զաքարեան, Գ.
Ենդիբայեան :

«Հորիզոն», 22 օգ., 7 սեպտ.

